



## Ամուլսարի շահագործման ծրագրի վերաբերյալ ակնկալում ենք բոլոր կողմ և դեմ փաստարկների օբեկտիվ ներկայացում

« Հայաստանի կանաչների միություն» հասարակական կազմակերպության նախագահ Հակոբ Սանասարյանի առաջարկությամբ ՀՀ բնապահպանության նախարարին կից հասարակական խորհրդի հերթական միստում քննարկվել են Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում անցած ծրագրին վերաբերող հարցեր: Բացելով միտը՝ ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը խորհրդի անդամներին տեղեկացրել է, որ միջազգային փորձագետների խումբը՝ Հարություն Բրոնոզյանի գլխավորությամբ, կրկին ցանկություն է հայտնել ՀՀ բնապահպանության նախարարության հովանու ներքո հանդիպել «Լիդիան Արմենիա» ընկերության փորձագետների հետ: «Նախորդ նույնանման նախաձեռնությունից միջազգային փորձագետները հրաժարվել էին, և ՀՀ բնապահպանության նախարարությունն ստիպված է եղել այս տարվա հունվարին հյուրընկալել միայն «Լիդիան Արմենիա» ընկերության փորձագետներին: Ունենալով նախորդ անհաջող փորձը՝ այնուամենայնիվ կրկին համաձայնել ենք կազմակերպել հանդիպում՝ փորձագիտական փաստարկված և օբյեկտիվ քննարկման արդյունքում հասարակությանը հուզող հարցերի պատասխանները ստանալու սպասումներով: Ակնկալում ենք, որ հանդիպմանն օբյեկտիվորեն կներկայացվեն կողմ և դեմ փաստարկները, բայց մեկ պայմանով՝ որ հստակ և վերջնական գնահատականներ տրվեն և անելիքները հստակեցվեն: Հակառակ դեպքում՝ չի կարելի նույն հարցի վերաբերյալ

պարբերաբար կարծիքներ հնչեցնել՝ չչափելով ոչինչ և վնասելով գործընթացները»,- ասել է Արծվիկ Մինասյանը և հավելել, որ մայիսի սկզբին նախատեսված հանդիպումը լինելու է միայն երկու կողմերի փորձագետների և, եթե հնարավոր է, ՀՀ ԲՆ հասարակական և գիտական խորհրդի անդամ հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ, իսկ լրատվամիջոցների հետ նախատեսվում է առանձին հանդիպում: Օրակարգի միակ հարցը զեկուցել է ՀՀ բնապահպանության նախարարին կից հասարակական խորհրդի անդամ Հակոբ Սանասարյանը: Բանախոսը մտահոգություն է հայտնել, որ հանքշահագործումն իրականացվում է Արփա, Որոտան և վերջինիս վտակ Դարբ գետերի ջրբաժանում, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ տարածաշրջանի ջրային ռեսուրսների և առաջին հերթին՝ Սևանա լճի ջրերի որակի վրա: Հ. Սանասարյանը ներկայացրել է Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման ծրագրում նկարագրված բնապահպանական ռիսկերը, կենդանական և բուսական աշխարհին հասցվելիք վնասները և մտահոգություն հայտնել, որ դրանց կանախարգելման, շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազագույնի հասցնելու տեխնիկական նախագծերն անբավարար են: «Հայաստանի կանաչների միության» նախագահը բարձրացրել է ծրագրի տնտեսական արդյունավետության խնդիրը, քանի որ հանքաքարում առկա են մեծ քանակությամբ բարձրարժեք օգտակար հանածոներ և այլ մետաղներ, սակայն նախատեսվում է կորզել միայն ոսկին և արծաթը:

• Անուլսարի ռահագործման ծրագրի վերաբերյալ ակնկալում ենք բոլոր կողմ և դեմ փաստարկների օրեկսիվ ներկայացում

Սկիզբը էջ 1 /



Երեք ժամից ավել տևած քննարկման ժամանակ հասարակական խորհրդի անդամները և հրավիրվածները հնարավորություն են ունեցել հանդես գալ ելույթներով և հնչեցնել իրենց հուզող մտահոգությունները, որոնց պատասխանել է ինչպես բանախոսը, այնպես էլ «Լիդիան Արմենիա» ընկերության կայուն զարգացման գծով տնօրեն Արմեն Ստեփանյանը և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ Արթուր Մինասյանը:

Ըստ Դ. Սանասարյանը եզրակացության հանքարդյունաբերական նախագիծը թերի է և պետք է ուժը կորցրած ճանաչել: Նախարար Արծվիկ Մինասյանը խորհրդի անդամներին հիշեցնելով, որ բնապահպանական գերատեսչությունը նորմատիվ որոշումների կայացման և վարչարարության մարմին է և գործում է բացառապես օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում: Նա մատնանշել է օրենքի այն դրույթները, որոնց առկայության դեպքում հնարավոր է ուժը կորցրած ճանաչել փորձաքննական եզրակացությունը: Նախարարը փաստել է, որ հիշատակված հիմքերից որևէ մեկն այս պահի դրությամբ առկա չէ, իսկ փորձաքննության գործընթացն իրականացվել է օրենքի շրջանակներում: «Եկոլուր» տեղեկատվական ԴԿ-ի նախագահ Ինգա Զարաֆյանն արձանագրել է, որ հանքի շահագործումը մեկնարկել է և առաջարկել իրականացնել հասարակական մշտադիտարկում՝ նախագծից շեղումները բացառելու նպատակով:

«Լիդիան Արմենիա» ընկերության ներկայացուցիչ Արմեն Ստեփանյանը ցանկացողներին հրավիրել է մասնակցային մոնիթորինգի, որը հանքավայրում արդեն իրականացվում է հարակից համայնքների բնակիչների մասնակցությամբ՝ նկատելով, որ մոնիթորինգի գործընթացը նկարագրված է բնապահպանական փորձաքննական դրական եզրակացություն ստացած ծրագրում: Բանախոսը ներկայացրել է նաև ծրագրի կառուցվածքը՝ բնական վիճակի նկարագրումն ու գնահատումը, ռիսկերի կանխատեսումները, դրանց կանխարգելման միջոցառումները և կառավարման պլանները, որոնցում ներդրվել է ճկունության բաղադրիչը: Ա. Ստեփանյանը տեղեկացրել է, որ ծրագրի հավելվածներում ավելի մանրամասն է ներկայացված նախատեսվող կանխարգելիչ միջոցառումները: Պատասխանելով Արծվիկ Մինասյանի հարցին՝ «Լիդիան Արմենիա» ընկերության տնօրենը ներ-

կայացրել է նաև հասարակությանը հուզող թեմային դրեմաժների կառավարման ուղղությամբ նախատեսված գործողությունները:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ Արթուր Մինասյանն իր ելույթում նշել է, որ ծրագրով մանրամասն նկարագրված է ռիսկերի ազդեցությունը նվազագույնի հասցնելու մեխանիզմները, իսկ միայն ոսկի և արծաթ կորզելը պայմանավորված է ԶԶ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից տրված լիցենզիայով, որում հաստատված է միայն ոսկու և արծաթի արդյունաբերական պաշարները: Անդրադառնալով հասարակությանը հուզող ցիանիդի խնդրին՝ մասնագետը տեղեկացրել է, որ անհրաժեշտ չափանիշներին բավարարելուց հետո «Լիդիան Արմենիա» ընկերությունն անդամակցել է Ցիանիդի կառավարման միջազգային օրենսգրքին և պարտավորվել է պահպանել դրա պահանջները: Արթուր Մինասյանը հայտարարել է, որ փորձաքննության գործընթացներում օրենքով սահմանված 4 հանրային քննարկում է տեղի ունեցել, որոնց մասնակցել և առաջարկություն է ներկայացրել միայն մեկ՝ Civil Voices հասարակական կազմակերպությունը:

Ամփոփելով քննարկումը՝ Արծվիկ Մինասյանը շնորհակալություն է հայտնել Դ. Սանասարյանին հետևողական և մեծ ծավալի աշխատանքի համար և նշել, որ հնչած և պատասխան չստացած հարցադրումներն արձանագրված են և լրացուցիչ մասնագիտական ուսումնասիրության կենթարկվեն: Նախարարը նաև տեղեկացրել է, որ հանքի հարակից տարածքներում իրականացվող ջրային ռեսուրսների մոնիթորինգի արդյունքներով, ներկա դրությամբ որակական փոփոխություններ չեն արձանագրվել: Կարևորելով հասարակական խորհրդում կազմակերպված քննարկումը՝ Ա.Մինասյանը նշել է, որ դրա արդյունքներն առաջիկայում կտեղափոխվի մասնագիտական հարթության վրա՝ միջազգային փորձագետների նախատեսվող հանդիպման ժամանակ: «Խորհրդի հարթակը կարևոր է այնքանով, որ մտահոգությունները բարձրացվեցին և դրվեցին պետական մարմնի և հանքշահագործող ընկերության առաջ, ինչը մեծապես նպաստում է գործընթացների կառավարմանը հասարակական կառույցների ներգրավմանը», - նշել է հասարակական խորհրդի նախագահը:



## Երբ նմասակը դասվեր իրագործելն է

Hayacq.com կայքը օրերս մի «գերբացահայտում» էր արել, թե իբր «հավաստի տեղեկություններով ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը, ըստ էության, պարզվում է Հեր-Հերի ջրամբարից ստորև գտնվող ամենաարդյունավետ գործող ՓՀԷԿ-երից մեկի սեփականատերն է»: Արել էր այդ «բացահայտումն» ու այդպես էլ ընթերցողին չէր ներկայացրել ասվածը հաստատող որևէ փաստ: Իսկ չէր ներկայացրել, քանի որ ներկայացնել չէր կարող՝ Արծվիկ Մինասյանը քանիցս հայտարարել է, որ ինքը ոչ ուղղակի, ոչ անուղղակի և ոչ էլ



փոխկապակցված անձանց միջոցով Հայաստանում գործող կամ կառուցվող որևէ հէկ-ի գործունեությունից որևէ անձնական, նյութական շահ չունի: Ի՞նչ եք կարծում, ինչու՞ հրապարակ նետվեց գոյություն չունեցող այս հէկի պատմությունը: Փորձենք պարզել: Խոսելով այն մասին, որ «ՀՀ կառավարությունը որոշում է կայացրել բնապահպանական թողքի գնահատման վերաբերյալ ՀՀ 2011 թ-ի հունիսի 30-ի N 927 Ն որոշումը փոփոխելու և նորնորմատիվներ սահմանելու վերաբերյալ», կայքը դժվարանում է քողարկել իր դժգոհությունն այդ որոշման հետ կապված, գրելով՝ «բանն այն է, որ այդ որոշման համաձայն գետերի ջրերի էկոթողքի չափը ավելացվել է՝ այն պարագայում, երբ գետերում ջրերի քանակը տարբեր պաշտոնական տվյալների համաձայն վերջին շրջանում գնալով նվազում է»: Եթե իսկապես վերջին շրջանում գետերում ջրերի քանակը նվազել է, ապա բնապահպանները սպասելի է, որ պիտի մտահոգվեին և առաջարկեին ավելացնել էկոթողքի չափը: Ու այս քայլի համար կարծես թե ճիշտն այն կլիներ, որ դրվատանքի խոսքեր ասվեին նախարարի հասցեին, ում ջանքերով կատարվել է կառավարության հիշյալ, բնության շահերից բխող, փոփոխությունը: Բայց դա անելու փոխարեն, կայքը որոշում է կեղծ լուրերով հրապարակայնորեն վարկաբեկել նախարարին: Ու նույն այդ հոդվածում տեղ գտած արտահայտություններով մատնում է վարկաբեկելու իր շարժառիթը: Իսկ դա ըստ ամենայնի հետևյալն է՝ որոշ շրջանակների մտահոգել է կառավարության այդ որոշումը և կայքին «հորդորել են» վարկաբեկել նախարարին: Այն, որ նյութը գրվել է՝ զլանալով խորամուխ լինել արժարժված թեմայի մեջ, վկայում է հետևյալ փաստը՝ կայքը մոզոնել է էկոթողքի մի նոր չափաբաժին, հայտարարելով, թե իբր գետերում սահմանված է «ջրի 33.3% պարտադիր էկոթողք»: Ոլորտի մասնագետները քանի օր է «զուլխ են ջարդում» ու այդպես էլ չեն կարողանում ըմբռնել, թե որտեղի՞ց ծագեց էկոթողքի հայացքքոմյան այս նորնը և ինչպե՞ս է հարկավոր այն հաշվարկել ու ապահովել: Թե՛ վերն ասվածը, թե՛ հիշյալ հոդվածի ոճը դրդում են խորհել պատվերի առկայության մասին, որը փութաջանորեն ձգտել է քողարկել կայքի հոդվածագիրը, սակայն ակնհայտորեն չի հաջողել՝ թեմայի մասին իր մոտ տարրական գիտելիքների բացակայության պատճառով:



# Ջրային ռեսուրսների կառավարման և օրենսդրության կատարելագործման ռազմավարության սկզբունքները կրկին ուժադրության կենտրոնում



Մարտի 29-ին ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը մասնակցել է «Ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում» ծրագրի շրջանակներում իրականացվող «Ջրային ռեսուրսների մասնակցային, թափանցիկ, հաշվետու և երաշխավորված կառավարմանն ուղղված օրենսդրության կատարելագործման ռազմավարության և ճանապարհային քարտեզի ներկայացման աշխատաժողովին: Ծրագրի նպատակն է խթանել Արարատյան դաշտի ջրային ռեսուրսների պատասխանատու կառավարումն ու օգտագործումը՝ հանրային մասնակցության և իրազեկման միջոցով, ինչպես նաև՝ քայլեր ձեռնարկել ստորգետնյա ջրերի արդյունահանման կրճատումն ապահովելու համար: Աշխատաժողովին մասնակցել են ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելության տնօրեն Դեբորա Գրիգերը, ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության պետ Վ. Դավթյանը, ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի տեղակալ Վ. Նարիմանյանը, «Ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ



օգտագործում» ծրագրի ղեկավար Ա.Վարոսյանը, ծրագրի իրավական կոնպոնենտի ղեկավար Հ. Ստեփանյանը, ԵՊՀ էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի փորձագետներ, ովքեր հանդես են եկել աշխատանքային խմբի գործունեության համառոտ ներկայացմամբ և ելույթներով:

ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանն իր խոսքում ներկայացրել է 2017թ. իրականացված Արարատյան դաշտի ձկնաբուծական տնտեսությունների խորքային հորերի փաստացի իրավիճակի ուսումնասիրության՝ ջրաչափման, փակնային ռեժիմի բերման և կապարակնքման ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքները: Նախարարի տեղակալը ողջունել է ջրավազանների մասնակցային կառավարումն ապահովելու համար հանրային քննարկումների մեխանիզմի ձևավորումը: Աշխատաժողովի ընթացքում ծավալվել է քննարկում ջրօգտագործման ոլորտում իրավակարգավորվող դաշտի բացերի, ինչպես նաև ջրային ոլորտի կառավարմանն առնչվող որոշումների կայացման թափանցիկությունը խթանելու վերաբերյալ:





**..Որոշագի ավելի շատ մարդիկ մասնագիտացան այս ոլորտում**

ՀՀ բնապահպանության ու կրթության և գիտության նախարարություններն ստորագրել են փոխըմբռնման հուշագիր



Ապրիլի 4-ին ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի նիստերի դահլիճում տեղի է ունեցել «Հայաստանի հիդրոքլորֆտորածխածինների փուլային փոխարինում» ծրագրի 2-րդ փուլի իրականացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և կրթության ու գիտության նախարարությունների միջև փոխըմբռնման հուշագրի ստորագրման արարողությունը: Հուշագիրը վավերացրել են Բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը և ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Վահրամ Մկրտչյանը: Հուշագրով սահմանվում է կողմերի պատրաստակամությունը՝ միմյանց աջակցելու ծրագրում ընդգրկված նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման, իսկ անհրաժեշտության դեպքում՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների, համապատասխան ուսումնական մոդուլների նախագծման, մշակման, ինտեգրման և ներդրման աշխատանքներում: Ողջույնի խոսքով հանդես է եկել ՄԱԶԾ կայուն աճի և զարգացման բաժնի բնապահպանական ծրագրերի աշխատակից Տաթևիկ Քոլոյանը, ով ներկայացրել է իրականացվող ծրագրի հիմնական բաղադրիչները: Փոխնախարար Խ. Հակոբյանը նշել է, որ իրականացվող ծրագրում առաջնայնություն է տրված մասնակցային սկզբունքին և շահագրգիռ գերատեսչությունների առավելագույն ներգրավվածությանը, այդ նպատակով որոշվել է երկու նախարարությունների համագործակցությունն ամրագրել հուշագրով: Ըստ Խաչիկ Հակոբյանի՝ «Հայաստանի հիդրոքլորֆտորածխածինների փուլային փոխարինում» ծրագրի ենթաբաղադրիչներից է սառնագեներատների արտադատման համակարգի գործունեության և միջին մասնագիտական հաստատությունների մասնագետների պատրաստման համար հզորությունների կատարելագործումը: Տվյալ ենթաբաղադրիչի շրջանակներում անդրադարձ է արվելու Հայաստանի սառեցման և օդորակման ոլորտում սպասարկման հզորությունների ամրապնդմանը, որի շրջանակներում ձեռք բերելով օգոնա-

անվտանգ եղանակով տեխնիկայի սպասարկման համար անհրաժեշտ 25 հավաքածու՝ դրանք կտրամադրվեն ուսուցումն անցած մասնագետներին: Բացի սա, նախատեսվում է ձեռք բերել ուսումնական սարքավորումների 3 հավաքածու և տրամադրել 3 միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների՝ համապատասխան մասնագիտական դասընթացների վերսկսման նպատակով: Ծրագրով նախատեսված է նաև իրազեկման և քարոզչական բաղադրիչ, որպեսզի ավելի շատ անհատներ ձգտեն մասնագիտանալ այս ոլորտում, քանի որ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կա համապատասխան մասնագետների պակաս: ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Վահրամ Մկրտչյանը ողջունել է համատեղ ծրագրի մեկնարկը, նշել, որ այդ նպատակով նախատեսվում է ընտրել Երկրորդ տարածաշրջանային քոլեջը, ինչպես նաև Արմավիրի ու Արարատի երկու միջին մասնագիտական հաստատություններ: Կարևորելով կլիմայի գլոբալ փոփոխությունների մեղմման ուղղությամբ արվող քայլերը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալը շնորհակալություն է հայտնել խնդիրների լուծման գործում ջանքերի մեկտեղման համար: Օգոնային շերտի պահպանության մասին Վիեննայի կոնվենցիայի ազգային համակարգող Լիանա Ղահրամանյանը նկատել է, որ օգոնաքայքայիչ մյուսերը հզոր ջերմոցային գազեր են և ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի հետ իրականացվող ծրագիրը, միտված լինելով այդ գազերի օգտագործման նվազեցմանը, նպաստելու է կլիմայի գլոբալ փոփոխության մեղմմանը: Ըստ բանախոսի՝ ընտրված ուսումնական հաստատություններում վերապատրաստվելու են դասավանդողներ, որոնք իրականացնելու են մասնագիտական ուսուցում այդ կրթական համալիրներում: Ժամանակակից տեխնիկական սարքավորումներով հագեցած ուսումնական հաստատությունները կպատրաստեն բարձր որակավորում ունեցող մասնագետներ, որոնց պահանջարկը մեծ է ոլորտում:



### Հրդեհների դեմ դայաբարում դեֆ է վաղօրո՞վ կարգի բերվեն բոլոր կառույցներն ու գործիքները

## Հրդեհների դեմ դայաբարում դեֆ է վաղօրո՞վ կարգի բերվեն բոլոր կա- ռույցներն ու գործիքները

**Տ**եղի է ունեցել աշխատանքային խորհրդակցու-  
թյուն, որը վարել է ՀՀ ԲՆ անտառային պետական  
կոմիտեի նախագահ Միքայել Մանուկյանը: Խորհրդակ-  
ցության առանցքում անտառային հրդեհների կանխար-  
գելման, դրանց դեմ պայքարի միջոցառումների կանոնա-  
կարգմանը վերաբերող հարցերն էին:

Խորհրդակցությանը մասնակցել են ՀՀ բնապահպա-  
նության նախարարության աշխատակազմի ղեկավարի  
տեղակալ Աշոտ Ավայանը, ԱԻՆ փրկարար ծառայության  
տնօրենի տեղակալ, փ/ծ գնդապետ Հովհաննես Եմիշյա-  
նը, ՀՀ ԱԻՆ փրկարար ուժերի վարչության մարտական  
պատրաստության բաժնի պետ փ/ծ գնդապետ Սարգիս  
Կյուրեղյանը, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի անտառտնտեսու-  
թյունների տնօրեններ: Անտառային պետական կոմիտեի  
նախագահ Միքայել Մանուկյանն իր խոսքում ընդգծել է.  
Նկատի ունենալով անցյալ տարվա հրդեհների բռնկման  
փորձը և հաշվի առնելով, որ առջևում հրդեհավտանգ ժա-  
մանակաշրջան է, կարևոր է ՀՀ արտակարգ իրավիճակնե-  
րի նախարարության հետ համատեղ աշխատանքային

խմբի ստեղծումը: Մանուկյանն առաջարկել է կարողու-  
թյունների հստակեցում կատարել, սահմանել հրդեհա-  
չիջման համար անհրաժեշտ սարքավորումների ցանկ,  
իրավիճակի գնահատում կատարել, գործողությունների  
պլաններ մշակել՝ հնարավոր հրդեհների կանխարգելման  
ուղղությամբ: Հրդեհաչիջման աշխատանքների արդյու-  
նավետ կազմակերպման համատեքստում Մանուկյանը  
կարևորել է նաև մարզպետարանների ներգրավվածու-  
թյունը՝ հավելելով, որ նախորդ տարվա ընթացքում տեղի  
ունեցած հրդեհներից հետո պարզ է դարձել նաև, որ  
հրդեհաչիջման ընթացքում իրականացվող աշխատանք-  
ների կոորդինացման անհրաժեշտություն կա:

Անտառտնտեսությունների տնօրենները մտահոգու-  
թյուն են հայտնել, որ հրդեհները հիմնականում բռնկվում  
են անտառամերձ համայնքային տարածքներում, հետո  
մուտք գործում անտառ և այս պարագայում անհրաժեշտ  
է, որ ԱԻՆ-ի կողմից միջամտություն լինի. համապատաս-  
խան տեխնիկայի կիրառում՝ անտառային տարածքներ  
հրդեհի մուտքը կանխելու համար, քանի որ անտառտն-  
տեսություններում եղած ռեսուրսները շատ հաճախ չեն  
բավարարում:

ԱԻՆ-ի աշխատակիցները եղած դժվարությունները վե-  
րացնելու, համագործակցելու պատրաստակամություն  
են հայտնել: ԱԻՆ փրկարար ծառայության տնօրենի տե-  
ղակալ, փ/ծ գնդապետ Հովհաննես Եմիշյանն իր հերթին  
«Հայանտառ»-ին է ներկայացրել որոշակի առաջարկներ,  
որոնք միտված են արդյունավետ փոխգործակցության  
իրականացմանը: Խորհրդակցության ընթացքում նաև  
ընդգծվել է անտառային տարածքներում բջջային կապի  
բացակայության հարցը:

Հանդիպման ավարտին որոշվել է ստեղծել աշխատան-  
քային խումբ, որում ընդգրկված կլինեն ինչպես ԱԻՆ-ի,  
այնպես էլ անտառտնտեսություններ աշխատակիցներ:







## • Օգտակար և հեռախոսային հանդիպումներ մարզերում՝ ֆերմերների և այգեգործների մասնակցությամբ

Սկիզբը էջ 71

Սրանք են այն զարգացած սարքերից մի քանիսը, որին այլ կերպ նաև անվանում ենք «ճշգրիտ գյուղատնտեսություն և ռոբոտային ագրոհամակարգ», որը թույլ է տալիս բիզնեսին զարգանալ դինամիկ, և լինել շահութաբեր»:

Քննարկմանը մասնակցում էին ֆերմերներ, գյուղատնտեսության ոլորտի մասնագետներ, առանձին ենթաօլորտների փորձագետներ: Հանդիպման մասնակիցները ողջունելով միմյանց, իրենց գոհուակությունը հայտնեցին Ա. Դանիելյանին՝ արժեքավոր տեղեկությունների համար, նշեցին, որ ձևավորվել է աշխատանքային պրոֆեսիոնալ խումբ, ինչը կնպաստի ծրագրի իրականացման բարեհաջող ընթացին: Գյուղաօլորտի պատասխանատուները ներկայացրին առաջնահերթ նշանակություն ունեցող մշակաբույսերի նախնական ցանկը, դրանց առավելություններն ու թերությունները և ակնկալվող արդյունքները: Կողմերը համոզեց եկան համոզիչ հիմնավորումներով և ձեռք բերվեց պայմանավորվածություն՝ երկու մշակաբույս՝ չիչխանը և ոսպը որպես մշակության համար նպաստավոր կուլտուրա ընտրելու վերաբերյալ: Հիշեցնենք նաև, որ Արմեն Դանիելյանի ղեկավարությամբ նույնաբովանդակ հանդիպում-սեմինար արդեն կազմակերպվել էր անցած տարվա Նոյեմբերին, Արարատի մարզի Սուրենավան համայնքում: Սեմինարին մասնակցում էին նաև Գեղարքունիքի և Սյունիքի մարզի ֆերմերներները, գյուղատնտեսության ոլորտի աշխատակիցները, որտեղ քննարկվել էին նոր տեխնոլոգիաների օգտագոր-

ծումը այգեգործության մեջ, հողերի պտղաբերմանը, խաղողագործությանը, խաղողի տեսակների մշակման պրակտիկային և դրանց կիրառմանը վերաբերող շատ հարցեր ու թեմաներ: Սեմինարի ընթացքում քննարկվել են նոր տեխնոլոգիաների կիրառմանը և հողի պտղաբերության բարելավմանը և դրանց օրգանական պարատացմանը առանցվող բազմաթիվ ուշագրավ հարցեր: Ֆերմերներին առաջարկվել էր ծանոթանալ սեմինարի նյութերին և ստացած գիտելիքները կիրառել այգեգործության մեջ: Քննարկումների արդյունքում՝ ինտենսիվ մշակության համար Արարատի մարզում ընտրվեց երկու մշակաբույս՝ ծիրանը և խաղողը: Ըստ ծրագրի համակարգող Արմեն Դանիելյանի՝ «Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում» ծրագրի նպատակն է սեմինարների միջոցով գիտելիքներ փոխանցել և աջակցել ֆերմերներին: Շփումների ընթացքում, ինչպես անկեղծորեն նշեց ֆերմերներից մեկը՝ «Մեր գյուղի այգեգործները տասնամյակներով, ինչու չէ, նաև հարուրամյակներով իրենց գերդաստաններով զբաղվել են խաղողի ու ծիրանի մշակությամբ և համոզված էին, որ գրեթե ամեն ինչ գիտեն այս գործի մասին: Սակայն այս սեմինարները եկան մեզ հուշելու, որ դեռ այնքան նոր ու օգտակար բաներ կան, որոնց իմացությունը և կիրառությունը կարող է շատ ավելի բարձր հիմքերի վրա դնել խաղողի ու ծիրանի մշակությունը և ավելացնել դրանց շահութաբերությունը»: Այս հանդպումը ևս վերածվեց շահագրգիռ քննարկման, քանի որ բոլորին հետաքրքրող հարցերը բավականին շատ էին: Ֆերմերները և այգեգործները առաջարկեցին, որ նմանատիպ սեմինարներ հաճախակի կազմակերպվեն, քանի որ դրանցից նախ կօգտվեն ֆերմերները և ապա՝ ստացած գիտելիքները, բնականաբար, կփոխանցվի մյուս գյուղացիներին:

Մանվել Սկրտչյան







## ՀԷԿ-ը մանր իր չէ, որ հնարավոր լինի թափանցել գրողանում

Վերջին օրերին լրատվական դաշտում կրկին հարցադրումներ են արվում Վայոց Ձորի մարզի Եղեգիս գետի վրա կառուցված հէկ-երի վերաբերյալ: Հնչեցնողները կրկին քաղաքացիներ Օ. Ստեփանյանը և Տ. Եղոյանն էին, նրանք թե՛ ասուլիս հրավիրեցին, թե՛ վերջինս հյուրընկալվեց հեռուստաձայնարներից մեկին ու իրենց կարծիքով իբր թե ահասարուռ բացահայտումներ արեցին: Անհրաժեշտ պարզաբանումներ ներկայացնելու համար մի քիչ հեռվից գանք: 2017թ. հուլիսի 11-ին Օ. Ստեփանյանը մի շարք հարցերի հետ կապված նամակով դիմել էր ՀՀ բնապահպանության նախարարին: Նրան ուղղված պատասխան նամակի մեջ նախարարությունը հայտնել էր, որ Եղեգիս գետի վրա փաստացի շահագործվում են 9 փոքր հիդրոէլեկտրակայան: Նամակն ստանալուց հետո Տ. Եղոյանը մամուլում հանդես եկավ հայտարարությամբ, թե իբր բնապահպանության նախարարությունը թաքցնում է հէկ-երի թվի հետ կապված իրական պատկերը: Նրա այդ հայտարարությանը հակադարձեց ու մամուլում պարզաբանումներ ներկայացրեց բնապահպանության նախարարը: Սակայն դա բավարար չեղավ, որպեսզի Ստեփանյան-Եղոյան զույգը դուրս գա թվային մոլորությունից: Ավելին, նրանք մամուլի ասուլիս հրավիրեցին՝ նախապես հայտարարելով, թե ապացուցելու են նախարարության ոչ ճիշտ տվյալներ տրամադրելու փաստը: Ասուլիսին ներկա գտնվեցին նաև նախարարության աշխատակիցները ու ևս մեկ անգամ պարզաբանեցին, որ կոնկրետ Եղեգիս գետի վրա շահագործվում է 9 հէկ, ևս 7-ն ունեն կառուցման թույլտվություն և որ կառուցման թույլտվությունները նախարարության կողմից չեն տրվում: Ներկայացվեց աղյուսակ այդ հէկ-երի վերաբերյալ: Նաև տեղեկացվեց, որ գործող հէկ-եր կան նաև Եղեգիսի վտակների վրա, և բոլորը գտնվում են օրինական դաշտում: Բայց ահա մարտի 26-ին գանգ եղավ նախարար-

ություն և հայտնեցին, որ Տ. Եղոյանը և Օ. Ստեփանյանը կրկին պատրաստվում են ասուլիսի և կրկին մտադիր են մեղադրանքներ հնչեցնել նախարարության հասցեին: Նախարարության ներկայացուցիչները հեռախոսազանգով փորձեցին պարզել նրանց մտահոգության պատճառը: Պարզվեց, որ նրանք նույն մոլորության մեջ են մնացել հէկ-երի թվի հարցում, բացի դա կառուցման թույլտվություն ունեցող երկու հէկ-երի տարածքում սկսված շինարարական աշխատանքներն ընկալել են որպես նոր հէկ-երի ապօրինի գործունեություն: Նախարարության աշխատակիցները համբերատար նրանց պարզաբանեցին, որ նախարարությունը հէկ-ի կառուցման թույլտվություն տրամադրելու իրավասություն չունի, որ հիշյալ ասուլիսից հետո հէկ կառուցելու թույլտվություն չի տրամադրվել որևէ մեկին, որ ամենն օրենքի սահմաններում է, որ Եղեգիսի վրա ոչ թե 19 (ինչպես իրենք են իբր հաշվել), այլ 9 հէկ է գործում, որ ևս 7-ն ունեն կառուցման թույլտվություն, որ այդ գետի վտակների վրա ևս կան գործող հէկ-եր, որ նախարարության ներկայացրած թվերն իրականություն են և որ իրենք մոլորության մեջ են: Ու որպեսզի նախատեսվող ասուլիսի ժամանակ իրենք իրականությանը չհամապատասխանող թվեր ու փաստեր չհրապարակեն ու չհայտնվեն ծիծաղելի իրավիճակում, նրանց առաջարկվեց հանդիպել ու պարզություն մտցնել այս ամենի մեջ: Այդուհանդերձ, Տ. Եղոյանը և Օ. Ստեփանյանը մնացին անասան իրենց դիրքորոշումներում, հրաժարվեցին հանդիպել և կրկին ասուլիս հրավիրելով բարձրացրեցին նախկին ասուլիսի հարցերը, որոնց վերաբերյալ իրենց հստակ պարզաբանումներ էին տրվել ժամանակին: Այս նոր ասուլիսի ժամանակ բանախոսները պնդեցին, թե իբր նախարարությունից 12 անգամ գանգել են իրենց, մինչդեռ իրականում եղել է երկուսը: Թվերի հետ կապված այս շփոթը ինչպես արդեն հստակ է, սովորույթ է Տ. Եղոյանի և Օ. Ստեփանյանի համար, քանի որ բազմիցս նրանց բացատրվել է, թե Եղեգիսի ու վտակների վրա որքան գործող հէկ կա և դրանցից ինչքանն ունեն կառուցման թույլտվություն: Բայց այս պարզ ճշմարտությունը ոչ մի կերպ հասու չի դառնում նրանց և ամեն անգամ հայտարարում են, թե իբր հայտնաբերել են թաքցված հէկ-եր: Կարծես թե հէկը մանր իր է, որը կարելի է թաքցնել գրպանում: Իսկ օրերս էլ նույն Տ. Եղոյանը հյուրընկալվելով հեռուստաալիքներից մեկին, թվերի շփոթելու գործում էլ ավելի առաջ գնաց ու հայտարարեց, թե իբր նախարարությունը հայտնել է Եղեգիսի վրա գործող ընդամենը 6 հէկի մասին: Կարելի՞ էր չէ, հարցազրույցի գնալուց առաջ ընթերցել պաշտոնական նամակները, ճշտել թվերը ու չհայտնվել ծիծաղելի վիճակում: Ո՞րն է թվային այս աճապարարության նպատակը: Սա հարց է, որի պատասխանը գտնելը մեզ խորհել է տալիս:

**ՀԳ. Բնապահպանության նախարարության ներկայացուցիչները վերոհիշյալ առաջին ասուլիսի ժամանակ հայտարարել են և հիմա էլ դիրքորոշումը նույնն է՝ ա/ կա՝ մտահոգություն գետերի էկոթողքի չափաբանակի հետ կապված և այդ խնդիրը լուծելու համար նախարարության ջանքերով ընդունվել է կառավարության համապատասխան որոշում, որի կիրառման շնորհիվ կավելանա գետերով հոսով ջրի չափաբաժինը, բ/ եթե Շատին գյուղն ունի ոգոռման հետ կապված հարցեր, ապա գործող օրենքի համաձայն՝ գյուղի ղեկավարությունը պիտի դիմի ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար և այդ հարցը լուծվելու է առաջնահերթ կարգով:**



Մարտի 31-ին Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված համաքաղաքային շաբաթօրյակին իրենց ակտիվ մասնակցությունն են ցուցաբերել Բնապահպանության նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կենտրոնական ապարատի և տարածքային բաժինների աշխատակիցները: Շաբաթօրյակի մասնակիցները մաքրման և ծառատունկի փաստանքներ են իրականացրել մայրաքաղաքի «Արաբկիր» զբոսայգու տարածքում: Իսկ Բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը նույն պահին մասնակցում էր Երևանի քաղաքապետարանի նախաձեռնած ծառատունկին:



### «Կինը և բնությունը» խորագրով ցուցահանդես Հայաստանի բնության լուսանկարային թանգարանում

Բնապահպանության նախարարության Հայաստանի բնության պետական թանգարանում տեղի է ունեցել «Կինը և բնությունը» խորագիրով ցուցահանդեսը, որտեղ ներկայացված էին Հայաստանի նկարիչների միության շուրջ տասներկու նկարչի աշխատանքները: Ցուցահանդեսը նվիրված էր Մայրության և գեղեցկության օրվան՝ ապրիլի 7-ին: Բնության թանգարանի տնօրինության անունից ողջունելով հյուրերին՝ Հանրահռչակման և հասարակության հետ կապերի բաժնի պետ Գոհար Սամոնյանը բարձր է գնահատել նմանատիպ միջոցառումների կարևորությունը, որոնք միտված են բնության հանդեպ հոգատարության սերմանմանը: Բաժնի պետը, ներկայացնելով ցուցահանդեսի մասնակիցներին, նշել է, որ նկարիչների աշխատանքների գունագեղության շնորհիվ թանգարանը ողողվել է զարման շնչով:

Ողջույնի խոսքով հանդես է եկել ՀՀ ժողովրդական նկարիչ, Նկարիչների միության անդամ, պրոֆեսոր Հրանտ Թադևոսյանը (Թաթոս), ով կարևորել է գեղանկարչության լեզվով կնոջ և բնության ներդաշնակումն ու մեծարումը:

Միջոցառման ընթացքում ելույթով հանդես է եկել նաև Հայաստանի նկարիչների միության անդամ, միջոցառ-

մանն աջակցող Հռիփսիմե Գրիգորյանը, ով շնորհակալություն է հայտնել նկարիչներին, նրանց կատարած աշխատանքների, թանգարանի տնօրինությանը՝ հանձնես Գայանե Ղազարյանի՝ համագործակցության, ինչպես նաև աջակցություն ցուցաբերելու համար: Միջոցառման ավարտին թանգարանի տնօրենը շնորհավորեց կանանց միամսյակը, ցանկանալով նրանց ամենալավն ու բարին: «Մեր տնօրինության կողմից թանգարանի ճեմասրահին անշահախնդիր տրամադրվում է բոլորին՝ սկսած նկարիչներից մինչև մեր մեծ վարպետները: Նմանատիպ միջոցառումները մեծապես նպաստում են հասարակության մոտ էկոլոգիական մշակույթի ձևավորմանը», - իր խոսքում նշել է թանգարանի տնօրեն



Նախագիծը՝ Արծրուն Պետրոսյանի  
խմբագիր՝ Սանվել Սևրջյան  
Ձևավորումը՝ Նարինե Բաղդասարյանի  
Նյութերը՝ ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության

Հեռախոս՝  
011 818 517